ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մարտիրոս Սարյան «Գրքարվեստ»

Հեղինակ՝ Բաղրամյան Լիա

Ղեկավար՝ Լիլիթ Իսկոյան /մանկ. գիտ. թեկ., դոցենտ/

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Մարտիրոս Սարյան. Կենսագրություն.....4

Ստեղծագործական գործունեություն.....5

Մարտիրոս Սարյանի գրքային արվեստը.....……...8

Եզրակացություն.....13

Գրականության ցանկ.....….14

Հավելված

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում հին ավանդույթ կա. ազգային մշակույթի ամենամեծ, համընդհանուր ճանաչված և հարգված ներկայացուցիչը կոչվում է ***վարպետ***: Այս առանձնահատուկ ու յուրահատուկ կոչումը, օրինակ ժամանակին կրել է բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: Հետո նկարիչ Մարտիրոս Սարյանին սկսեցին անվանել ***վարպետ***[1]:

Սարյանը գիտակցաբար և խոր հասկացությամբ մոտեցավ արվեստին: Տարիների համառ աշխատանքի օգնությամբ նա սովորեց Հայաստանի և Հարավի գույները և գծերը և հատկապես մեր նախնիների անգին ժառանգությունը... ահա այս փաստերով նա ստեղծեց իր արվեստը՝ ամբողջությամբ ազգային:

Սարյանը խոշոր ներդրում է կատարել 20-րդ դարի հայկական գրքարվեստի և բեմանկարչության ասպարեզներում: Շատ չեն Սարյանի գրքային ձևավորումները, սակայն դրանք ունեն նույն որակը, ինչ նկարչի մյուս ժանրերի երկերը: Դրանց ձևաբանական, տեխնիկական հնարքները ևս ճկուն ու բազմազան են: Չնայած իր նկարազարդումներում խստորեն հետևել է գրական երկի սյուժետային գործողությանը, մոտիվներին ու բովանդակությանը, դրանք ունեն նաև ինքնուրույն կերպարվեստային արժեք:

[1]Сарян Мартирос, Живопись акварели, рисунки иллюстрации театрально-декорационное искусство, издательцтво <<Аврора>>, Ленинград, 1987, с 7.

Մարտիրոս Սարյան

Մարտիրոս Սարգսի Սարյանը ծնվել է 1880 թվականի փետրվարի 29-ինՆոր Նախիջևանում: Եղել է հայ նկարիչ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1960), ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՀԽՍՀ նկարիչների միության նախագահ:

Մարտիրոս Սարյանի անեցի նախնիները գաղթել են Ղրիմ, որտեղից նրանց շառավիղները տեղափոխվել են Նոր Նախիջևան:

Սարյանը 1895 թ-ին ավարտել է Նոր Նախիջևանի հայ-ռուսական հանրակրթական, 1903 թ-ին՝ Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանները, կատարելագործվել Վալենտին Սերովի և Կոնստանտին Կորովինի դիմանկարի արվեստանոցում: Սովորելու տարիներին ստեղծել է մոր՝ Ուստիան Սարյանի (1898 թ.), Սոֆյա Միանսարյանի (1903 թ.) դիմանկարները, «Ինքնանկարը», «Մայրավանքը» (երկուսն էլ՝ 1902 թ.) և այլ գործեր:

1901 թ-ին Սարյանն առաջին անգամ եղել է Երևանում, Աշտարակում, Վաղարշապատում, Սևանում, 1902 թ-ին՝ Անիում: Ճամփորդության ընթացքում, ինչպես և հետագա տարիներին, հափշտակությամբ ուսումնասիրել է իր ժողովրդի պատմությունը, նիստուկացը, մշակույթը, ճարտարապետության, քանդակագործության, որմնանկարչության և դեկորատիվ-կիրառական արվեստի հուշարձանները, որը վճռական ազդեցություն է ունեցել Սարյանի աշխարհայացքի և ստեղծագործական մեթոդի ձևավորման ու զարգացման վրա:

Մեծ եղեռնի օրերին Մարտիրոս Սարյանը աշխատել է Հայերին օգնող մոսկովյան կոմիտեում, Հ. Թումանյանի, Գ. Լևոնյանի և այլոց հետ Էջմիածնում օգնել է հայ գաղթականներին:

«Ու ահա, 1915թ. ես տեղեկանում եմ Հայաստանին բաժին հասած նոր դժբախտության մասին: Թողեցի ամեն ինչ ու ետ վերադարձա հայրենիք:

Էջմիածնում ու դրա շրջակայքում ես տեսա մարդկային ամբոխներ, որոնք թուրքական

Հայաստանի Ցեղասպանությունից էին փախչում… Իմ աչքի առաջ մեռնում էին մարդիկ, իսկ ես նրանց օգնել համարյա չէի կարողանում: Ես ծանր հիվանդացա, ինձ տարան Թիֆլիս՝ ակնհայտ խորը հոգեկան խանգարումով»,- հիշում է Սարյանը[2]:

---

[2]https://syuniacyerkir.am/arants-hayreniqi-mardy-chi-karokh-gtnel-iren-ir-hogin-martiros-saryan

Նկարիչը երկար չարչարանքներից ու տանջանքներից հետո Թիֆլիսում հանդիպում է հայ գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանի դստերը՝ Լուսիկ Աղայանին: Սարյանը նրանում հարազատ հոգի է տեսնում, ու շուտով ամուսնանում հետը: Նա Սարյանի համար դառնում է կանացի կատարյալ գեղեցկության մարմնացում: Նկարիչների շարքում Սարյանը միամուսնության բացառիկ օրինակ էր: Իր կնոջը նա նկարում էր ողջ կյանքի ընթացքում՝ առաջին կտավներում երիտասարդ Լուսիկն էր, հետո արդեն սիրելի կինն առօրյա կյանքում էր: Նա նկարում էր Լուսիկին քնած, գիրք կարդալիս, տան գործերն անելիս, հեռախոսով զրուցելիս, նույնիսկ լվացք անելիս: Նա հիանում էր կնոջ գեղեցկությամբ, պաշտում նրան ու գնահատում մինչև մահ:

Երկար ընդմիջումից հետո Սարյանը շուտով աշխատանքին վերադառնալու փորձեր է անում, ու հասկանում, որ հենց շնորհիվ Հայաստանի է իր ստեղծագործական կյանքը վերածնվում:

Սարյանը աչքի է ընկել նաև իր հասարակական գործունեությամբ: Նա ակտիվ մասնակցություն է ցուցաբերել 1916-ին Թիֆլիսում Հայ նկարիչների միության հիմնադրմանը: Ռոստովում հիմնադրել է հայկական թանգարան: 1921-ին Սարյանը առաջիններից մեկն էր, որ վերադարձավ հայրենիք և մինչև կյանքի վերջը անմացորդ նվիրվեց երկրի մշակութային կյանքի կառուցմանը: 1921-1935 թթ. նա եղել է Հայաստանի նորաստեղծ պետական թանգարանի գեղարվեստական բաժնի առաջին վարիչը:

1967թ. Երևանում բացվել է Մարտիրոս Սարյանի թանգարանը: Սարյանի արվեստը յուրահատուկ ձոներգ է եղել հայրենի երկրին և կյանքին:

Մարտիրոս Սարյանը մահացել է 1972թ. մայիսի 5-ին, Երևանում, 92 տարեկան հասակում: Նրա գերեզմանը գտնվում է Կոմիտասի անվան պանթեոնում:

Ստեղծագործական գործունեություն

Սարյանը գիտակցաբար և խոր հասկացությամբ մոտեցավ արվեստին: Տարիների համառ աշխատանքի օգնությամբ նա սովորեց Հայաստանի և Հարավի գույները, և հատկապես մեր նախնիների անգին ժառանգությունը… ահա այս փաստերով նա ստեղծեց իր արվեստը՝ ամբողջությամբ ազգային:

Ավետիք Իսահակյան

Մարտիրոս Սարյանը իր ստեղծագործական գործունեության ընթացքում ստեղծել է դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ, պաննոներ, ձևավորել գրքեր, կատարել բեմանկարչական գործեր: Նրա համար չեն եղել կարևոր ու երկրորդական ժանրեր:

Սարյանը մեր ժամանակների խոշորագույն դիմանկարիչներից էր: Նրա ստեղծած դիմանկարների միջոցով կարող էինք ծանոթանալ հայ ժողովրդի մի ամբողջ դարաշրջանի հերոսական պատմությունը կերտող անհատների հետ: Լավագույն գործերից են եղել Թ. Թորամանյանի, Ալ. Թամանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ա. Մանթաշյանի, Մարշալ Բաղրամյանի, Գ. Լևոնյանի, Ալ. Ծատուրյանի դիմանկարները: Սարյանը դիմանկարի ժանրը հարստացրեց նաև հորինվածքային նոր ձևերով՝ ստեղծելով խմբակային դիմանկարներ, որոնցից են *<<Լուսիկը երեխաների հետ>>, <<Իմ ընտանիք>>, <<Երեք հասակ>>:*

Նկարչի արվեստում կարևոր տեղ են գրավում նաև նատյուրմորտները: Ամբողջ կյանքի ընթացքում Սարյանը նկարել է հայրենի բնաշխարհի ծաղիկներն ու մրգերը, որոնք բնության հետ նկարչի հատուկ զրույցի անմիջական արտահայտություններն են *(<<Քալակիի ծաղիկները>>, <<Աշնանային ծաղիմները և պտուղներ>>,* 1939, *<<Բուժականի ծաղիկները>>,* 1946, *<<Հոկտեմբերը Երևանում>>,* 1961):

Հայ արվեստում Սարյանն է ստեղծել իր չափերով ամենամեծ նատյուրմորտը՝ *<<Ծաղիկներ հայրենական պատերազմում զոհված մարտիկներին>>*,(տե՛ս նկար1)*:* 1945, որն արտահայտում էր ժողովրդի միասնությունը, մահը, հաղթելու նրա անսահման հավատը: Սարյանը նատյուրմորտի ժանրը հարստացրել է նոր բովանդակությամբ ու արտահայտչամիջոցներով, ինչը հիմնարար նշանակություն է ունեցել մի ամբողջ սերնդի նկարիչների համար:

Պայմանականորեն Սարյանի ստեղծագործական կյանքը կարելի է բաժանել երեք փուլի:

Առաջին փուլ

Ստեղծագործության այս շրջանում (1904 - 1909) Սարյանը հրաժարվել է ավանդական մտածելակերպից՝ ստեղծելով մի նոր ու նորարարական արվեստ, որը ժամանակի առաջադեմ մտավորականությունն ընդունել ու կոչել է «սարյանական»: Այդ տարիներին նա ծանոթացել է ֆրանսիական նորագույն շրջանի գեղանկարչությանը (ըստ Ի. Ս. Շչուկինի հարուստ հավաքածուի և «*Ոսկե գեղմ»* ամսագրի ցուցահանդեսների), առավել ևս համոզվել իր ստեղծագործական որոնումների ճշմարտացիության մեջ: 1907 թվականին Սարյանը ներկայացրել է *«Հեքիաթներ և երազներ»* ֆանտաստիկ պատկերների մեծ շարքը («*Լուսնկա գիշեր»,* 1904, *«Հեքիաթ: Արարատի ստորոտում»,* 1904, «*Ծաղկած սարեր»,* 1905, «*Փերիների լիճը»,* 1905, *«Լուսնի կախարդանքը»,* 1906, *«Համբույր»,* 1906, *«Հովազներ»,* 1907, «*Գիսաստղ»,* 1907, *«Հովազը և կանայք»,* 1908, «*Տապ: Վազող շուն»,* 1909):

«Հեքիաթներ և երազներ»–ում Սարյանը մերժել է ավանդական, «թանգարանային» մութկեկ կոլորիտը: Սակայն նրան խորթ էր նաև գունալուսային անցողիկ տպավորությունների, առարկաների արտաքինի վրա թրթռացող ելևէջների իմպրեսիոնիստական ֆիքսումը[3]:

Երկրորդ փուլ

Սարյանի ստեղծագործության երկրորդ շրջանի (1910-ական թվականներ) երկերը *(«Կ. Պոլիս: Փողոց: Կեսօր»,* 1910, *«Ի. Ս. Շչուկինի դիմանկարը»,* 1910, *«Փյունիկյան արմավենի,* 1911, «*Եգիպտական գիշեր»,* 1911, «*Բանաններ*», 1911, «*Գ. Լևոնյան*», 1912, «*Պարսկական նատյուրմորտ*», 1913, «*Քաղաքիկի ծաղիկները*», 1914, *«Ա. Ծատուրյան»,* 1915, *«Ծաղիկներ»,* 1916, *«Դաշտային ծաղիկներ»,* 1918) ի տարբերություն «*Հեքիաթներ և երազներ*»–ի՝ թեմատիկայով ֆանտաստիկ չեն: Դրանք մոտիվներով արդեն կոնկրետ-իրական են: Բայց կերպավորման ընդհանուր-էսթետիկական մի քանի սկզբունքներով դարձյալ, ճիշտ է յուրովի, զարգացնում են նախորդ շրջանի գործերի տեսիլքային կողմնորոշումը:

Երրորդ փուլ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Սարյանը 1921 թվականին ընտանիքով տեղափոխվել և մշտական բնակություն է հաստատել Երևանում: Որից հետո սկսվել է նրա բեղմնավոր կյանքի նոր՝ երրորդ (1920 - 72) շրջանը: Աշխարհի տարբեր վայրերից հայրենիք վերադարձած գիտնականների, արվեստագետների, գրողների հետ լծվել է նորագույն ժամանակի հայ մշակույթի և մշակութային մի շարք օջախների ստեղծմանը: 1921 թվականին Հակոբ Կոջոյանի հետ ստեղծել է խորհրդային Հայաստանի գերբը, ընտրվել Հայաստանի կերպարվեստի աշխատողների միության առաջին նախագահ: 1924 թվականին մասնակցել է Վենետիկի Բիենալեի XIV ցուցահանդեսին: 1928-ին Փարիզում «*Ժիրար*» պատկերասրահում բացվել է Սարյանի անհատական ցուցահանդեսը: Այդտեղ ցուցադրված աշխատանքները հայրենիք տեղափոխող «Ֆրիժի» նավի վրա հրդեհ է առաջացել, այրվել է նկարների մեծ մասը:1923 թվականից ստեղծել է հայրենասիրական ոգով տոգորված պաննոներ, դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ («*Հայաստան», «Լեռներ: Հայաստան»,«Եղիշե Չարենցի դիմանկարը», «Արևոտ բնանկար*», չորսն էլ՝ 1923, *«Աշնանային մառախլապատ օր»,* 1928, *«Զանգվի ափը»,* 1930, «*Ծաղիկներ*», 1945, նկարիչ Ս. Աղաջանյանի, 1930, Թորոս Թորամանյանի, 1934, Ակսել Բակունցի մոր, 1935, Ս.Մալխասյանի, 1943, դիմանկարները, «*Երանոսի լեռները»,* 1951, «*Բակի անկյուն»,* 1953):

[3]https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D6%80%D5%B8%D5%BD_%D5%8D%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6

Այս շրջանում արմատապես կերպարանափոխվել են Սարյանի պոետիկայի ու տեխնիկայի մի շարք սկզբունքներ։ Իրականության հետ խիստ միջնորդավորված այն հարաբերությունը, որ բնորոշ էր նրա նախորդ շրջանի երկերին, այժմ դարձել է ավելի անմիջական։ Եվ ինչպես նկատում ենք, ֆանտաստիկան ու կյանքի իդեալիստական մոդելավորումը այստեղ տեղի են տվել շոշափելի առարկայական և առօրյա-բնական պատկերացումներին։

Մարտիրոս Սարյանի գեղարվեստական գործունեությունը չի սահմանափակվում միայն ստեղծագործական աշխատանքով։ Նա Հայաստանի սովետական նկարիչների միության կոլեկտիվի հասարակական-գեղարվեստական կյանքի ակտիվ մասնակից էր։ Երկար տարիներ նա եղել է այդ Միության նախագահը և ՍՍՌՄ նկարիչների միության Կազմկոմիտեի անդամ։ Նա, միաժամանակ, զգալի աշխատանք է կատարել ռեսպուբլիկայում՝ նկարիչների ազգային կադրեր պատրաստելու բնագվառում։ Որպես նկարչության պրոֆեսոր նա Երևանի Գեղարվեստական ինստիտուտում ոչ միայն իր ղեկավարությամբ, այլև խորհուրդներով, չափազանց սիրալիր ու հոգատար վերաբերմունքով օգնել է երիտասարդ նկարիչներին՝ արագորեն աճելու և նկարչության պրոֆեսիոնալ բարձր կուլտուրային տիրապետելու համար[4]։

Մարտիրոս Սարյանի գրքային արվեստը

Գրքի գեղարվեստական ձևավորման արվեստը կոչվում է գրքարվեստ։ Գրքարվեստում համադրվում են զուտ գեղարվեստական (արտահայտչական, խորհրդանշական, գեղազարդիչ) և գրքի կառուցվածքատեխնիկական ու նշանային տարրերը, որոնցով տպագրությունը ձեռք է բերում գեղարվեստական նշանակություն։Գրքի կառուցվածքի, գեղարվեստական ձևավորման և էջկապի խնդիրները լուծվում են գրքի դիզայնի եղանակներով։ Գրքարվեստը ժամանակակից իմաստով՝ որպես գրքի գեղարվեստական ձևի ստեղծման և տպագրության արվեստի ինքնուրույն տեսակ, ձևավորվել է գրատպության գյուտից հետո (Եվրոպայում՝ 1440-ական թվականներ)[5]։

Անցյալ դարի 20-ական թթ. վերջին և 30-ական թթ.-ի սկզբին գրքի ձևավորման արվեստը Հայաստանում կարճատև, բայց վառ ծաղկում ապրեց։ Այստեղ որոշիչ դեր խաղաց

[4]Սարգսյան Մ., Մարտիրոս Սարյան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ., Ե., 1955, էջ 70-72, https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/1951-1980/m_saryan_1955.pdf

[5]https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D6%80%D6%84%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF

Եղիշե Չարենցը, ով էլ իր հերթին այս գործի մեջ ներգրավեց հայ արվեստի մին շարք ականավոր գործիչների, այդ թվում՝ Մարտիրոս Սարյանին[6]:

Այժմ ավելի մանրամասն և հանգամանալից ներկայացնենք Մարտիրոս Սարյանի գրքային արվեստը:

Նկարիչ Մարտիրոս Սարյանը, թեև իր ողջ գործունեության ընթացքում շեշտել է, որ չի սիրում գրքարվեստով զբաղվել, քանի որ բավական աշխատատար է, իր տարերքը հաստոցային գեղանկարչությունն է, սակայն գրող Եղիշե Չարենցի ջանքերի շնորհիվ ներգրավվում է հայկական գրահրատարակչական ոլորտ, ծավալում է բուռն գործունեություն, ինչի արդյունքում ունենք հարուստ ժառանգություն: Սակայն այդ ժառանգությունը տարբեր թանգարանների ֆոնդերում ու նկարչի ընտանիքի հավաքածուում է պահվել ու մեծ մասամբ անծանոթ է եղել արվեստասերներին:

«Ես չգիտեմ, երբ է իմ մեջ ծնվել նկարիչ: Հնարավոր է այն օրերին, երբ ես լսում էի իմ ծնողների պատմությունները՝ մեր լեռնային կախարդական ծննդավայրի մասին, երբ մանկիկ հասակում վազվզում էի տան շրջակայքով, ուրախանում բազմերանգ թիթեռներով և միջատներով: Գույն, լույս, երազանք ահա այն ինչ ես երազել եմ», ասում էր Մ. Սարյանը:

«Մարտիրոս Սարյան. Գիրք և արվեստ» էքսպոզիցիան ընդգրկում է 90-ից ավելի գրքային նկարազարդումներ (շապիկ ու ֆորզաց, անվանաթերթ, ինքնուրույն պատկերազարդում, սկզբնանկար ու վերջանկար), անվանի գրողների պորտրետներ, տպագիր գրքեր, արխիվային լուսանկարներ, իսկ ծավալուն գիտական էքսպլիկացիան վեր է հանում գիտահետազոտական բացահայտումներ ու ճշգրտումներ[7]:

Սարյանի գրքարվեստը սկիզբ է առել Ռուսաստանում ապրելու տարիներին: Վաղ ստեղծագործական շրջանում վարպետը ձևավորել է ռուս գրողներ Միխայիլ Լերմոնտովի և Վլադիմիր Էլսների ստեղծագործությունները, համագործակցել վերջինիս հետ: 20-րդ դարի սկզբին նա ստեղծել է Վահան Տերյանի բանաստեղծությունների ժողովածուի շապիկի էսքիզը(տե՛ս նկար 2):

Հանդես գալով իբրև յուրատիպ ճարտարապետ՝ Սարյանը տալիս է գրքարվեստի հիմնական սկզբունքների իր բանաձևը: Գիրքը պետք է կառույցի նման օժտված լինի համամասնությունների ներդաշնակ հարաբերություններով, ծավալի ու չափերի միասնությամբ, բաղադրյալ մասերի՝ սկզբնազարդերի, վերջազարդերի, տեքստի ու

[6] https://kentron.am/am/news/253376

[7] «ՄարտիրոսՍարյան. Գիրքևարվեստ», https://www.cultural.am/hy/norutyunner/lurer/4047-martiros-saryan-girq-ev-arvest-cucahandesi-katalogy-bacahaytum-e-ancanot-saryanin

պատկերների տրամաբանական միահյուսմամբ, «շքամուտքի դեր կատարող սուպերշապիկն ու տիտղոսաթերթը պետք է հոգեբանորեն տրամադրեն գեղեցիկի աշխարհը մտնելուն»[8]:

Գրական ստեղծագործություններից զատ, Սարյանն անդրադարձել է նաև նշանավոր հեղինակների՝ Հովհաննես Թումանյան(տե՛ս նկար 3), Ավետիք Իսահակյան(տե՛ս նկար 4), Վահան Տերյան, Եղիշե Չարենց(տե՛ս նկար 5), Գուրգեն Մահարի(տե՛ս նկար 6), Կոստան Զարյան, Արշակ Չոպանյան, Վահան Թոթովենց, Մարիետա Շահինյան, Վիլյամ Սարոյան, Աննա Ախմատովա, Իլյա Էրենբուրգ, Ջոն Ստայնբեք… Վարպետի արվեստանոցում նրանց հանդիպումներն ու զրույցները հավերժացել են իբրև դիմանկարներ:

Սարյանը կատարել է նաև նշված հեղինակներից մեծ մասի ստեղծագործությունների շապիկների նկարազարդումները (տե՛ս համապասխանաբար նկար 7, 8, 9):

Բացի այդ Սարյանի գրքային գրաֆիկայի ասպարեզում ստեղծած ամենավաղ պատկերազարդումները եղել են ռուս հեղինակներ Միխայիլ Լերմոնտովի, Վլադիմիր Էլսների և Վալերի Բրյուսովի գրքերի համար:

Նկարիչն անդրադարձել է նաև դասագրքերի ու մանկական գրականության պատկերազարդմանը: Գրչածայրի կամ վրձնի մեկ հպումով կյանք առած հեքիաթային մոտիվները մեզ տեղափոխում են դեռևս մանկուց հարազատ ու ծանոթ աշխարհներ…

Համաշխարհային պոեզիայի գլուխգործոցներից են համարվում «Շահնամեից» «Ռոստամ և Սոհրաբ» պոեմների շքեղ նկարազարդումները, որտեղ Սարյանի վիրտուոզ վրձինն ու վառ երևակայությունը պարսկական մանրանկարների ոգով կենդանացրել են արևելյան պատումներն իրենց ամբողջ հմայքով ու խորությամբ:

Սարյանը այն մարդն էր, ով հրաշք էր համարում այն, ինչ շատերս անգամ չէինք էլ նկատում՝ գույնը: «Ես երազում եմ գույնի մասին, գույնը իսկական հրաշք է», ասում էր Սարյանը: «Իսկ արևի լույսի տակ գույնը ցույց է տալիս մեր տեսածի հոգին և տիեզերական գոյության էությունը»: Երբ լսում ենք Սարյանի մասին, բոլորի մոտ, առաջին բանը որ միտքը գալիս է, դա գույնն է: Այո, իսկապես, Սարյանի ձեռագիրը իր գույներն են:

Սակայն, շատ հաճախ, Սարյանի աշխատանքները սուր քննադատության են ենթարկվել՝ վառ գույների պատճառով: Նկարչին անվանում էին «ֆորմալիստ», մեղադրում «իդեալիստական աշխարհայացք» ունենալու մեջ:Երբեմն նկարիչը ստիպված էր լինում մեղմել իր կտավների գույները, փորձում էր «նկարել հասկանալի»: Բայց վարպետությունը իրենն էր անում, գեղանկարչությունը հաղթում էր: Վարպետի ստեղծած *«Ինքնադիմանկար*

[8]ՄարտիրոսՍարյան, գիրքևարվեստ, https://hy.armradio.am/2022/10/31/%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D6%80%D5%B8%D5%BD-%D5%BD%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%AB%D6%80%D6%84-%D6%87-%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF/

դիմակով» կտավը (1933թ.) արտահայտում է ինքն իր հետ մնալու նրա ձգտումը՝ ինչ էլ որ լինի պահպանել իր արվեստի սկզբունքները, հավատարիմ մնալ բարձր արվեստի մշտնջենական, մարդասիրական գաղափարներին: Իսկ Ստալինին փառաբանող պատկեր կերտելու պահանջին նկարիչը պատասխանում է, որ դիմանկար ստեղծելու իր սկզբունքն է՝ աչքի առջև բնորդին տեսնել: 1937 թվականին պատկերասրահի բակում այրում են Մարտիրոս Սարյանի վրձնած հայ առաջավոր պետական
գործիչների և մտավորականների 12 դիմանկար, քանի որ դրանց բնորդները դատապարտված էին որպես «ժողովրդի թշնամի»[9]:

Այդ դիմանկարներից միայն մեկն է փրկվում՝ Եղիշե Չարենցի դիմանկարը, որը թանգարանի աշխատակիցները թաքցրել էին:

Այդ տարիներին Սարյանը շատ քիչ էր նկարում: Նրա գործերում գերակշռում էին թատերական և գրքային ձևավորումների էսքիզները: Սարյանը շատ ծանր էր տանում անհիմն քննադատության հարձակումները: Ցավի ու հիասթափության պահերին նա կտրատում է իր կտավները:Դրանց թվում էր 1910-ականների հայտնի գործերից մեկը՝ «*Եգիպտական դիմակները»,* որը, բարեբախտաբար, երիտասարդ նկարիչները, որոնք մշտապես նրա շուրջն էին, խլում են և, ի շնորհիվ Հովհաննես Զարդարյանի, նկարի հատվածները սոսնձում են ստվարաթղթի վրա, սակայն կտավի սպիները նկատելի են մնացել (տե՛ս նկար 10):

Հետհեղափոխական իրականությունում, երբ քաղաքական հրամայականը հետին պլան էր մղել ազգային թեմատիկան, Սարյանը փորձում էր չկորցնել հավասարակշռությունը՝ հաճախ համադրելով սոցիալիստականն ու ազգայինը: Վերջինիս պատճառով նրա որոշ ձևավորումներ մնացել են անտիպ: Այդ շրջանի գրքային գրաֆիկայի լավագույն նմուշներից են համարվում Վահան Թոթովենցի, Գուրգեն Մահարու, Միքայել Նալբանդյանի, Մարիետա Շահինյանի ստեղծագործությունների ձևավորումները:

Սարյանի ստեղծած դիմանկարներից, հատկապես ուշադրության է արժանի *«Լուսիկ Սարյանի դիմանկարը»,* որը նկարիչը ստեղծել է ծանր ապրումների ազդեցությամբ, երբ կրտսեր որդին մեկնել էր ռազմաճակատ (տե՛ս նկար 11):Եվ այսպիսով, նկարչի կնոջ՝ Լուսիկ Սարյանի ձեռքին պատկերված պտուղը հայելում արտացոլվում է որպես որդուց սպասվող

[9]https://angelikamanukyan.wordpress.com/2017/03/04/%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D6%80%D5%B8%D5%BD-%D5%BD%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/

նամակ. վեց ամիս շարունակ ծնողները լուր չունեին Կիևում առաջնային դիրքերում գտնվող իրենց որդուց:

Մարտիրոս Սարյանը *«Երեք հասակ: Ինքնադիմանկար»* (տե՛ս նկար 12) կտավում հազարամյա պատմություն ունեցող հարազատ երկիրն է պատկերել՝ համադրելով այն իր կյանքի հետ՝ ներկայացնելով երիտասարդ, միջին և ալեհեր տարիքների զուգակցումը: Նկարիչն իր զենքը համարում էր իր վրձինը, մատիտը, ներկապնակը, բարեխիղճ ու ստեղծարար աշխատանքը, գեղեցիկ ու բարձրաճաշակ, բնական և գեղարվեստական որակ ունեցող արվեստը: Իր երկիրը նա պաշտպանում էր իր ստեղծագործ արվեստով:

Հետագայում դիմանկարի ժանրը շարունակելով՝ Մարտիրոս Սարյանը նկարել է իր ժամանակակիցներին, մտածող և իրենց ժամանակի ողջ դրամատիզմը ապրող մտավորականների: Նկարել է նաև Հայաստան այցելած ամերիկացի հանրահայտ արձակագիր Ջոն Սթեյնբեքին՝ հյուրընկակելով իր արվեստանոցում, ով վառ տպավորություններ է ստացել նկարչի հետ խոսք ու զրույցից (տե՛ս նկար 13):

Մարտիրոս Սարյանն ավելի ազատ էր ստեղծագործում իրեն հոգեհարազատ բնանկարի ժանրում, ստեղծում բազմաթիվ նկարներ: Նկարիչը վերադառնում է իր սիրած պլեներային մեթոդին, սկսում է նոր ուղևորություններ Հայաստանի տարբեր շրջաններ, աշխատում է Դվինում, Լոռիում (1952թ.), Սևանում (1953թ.), Բյուրականում (1957–1958թթ.): Այդ շրջանի մի քանի աշխատանքներ միավորել է «Իմ Հայրենիքը» շարքում (տե՛ս նկար 14):

1969 թվականին Սարյանը Հայկական համայնապատկերի համադրությամբ նկարել է Կոմիտասին (տե՛ս նկար 15), ում մասին ասել է. «…Կոմիտասը, իհարկէ, ինչպէս բոլոր հանճարները, կոնկրետ մարդ է եղել: Բայց թէ ի՞նչ կոնկրետ: Եթէ շատ կոնկրետ լիներ, էլ ի՞նչ Կոմիտաս: Նա իր մէջ կրել է բնությունը: Դա մեր հողն է, հողի հոտը, համը, ջուրը, սարերի օդը, էլ ի՞նչ ասեմ: Նա այդ բոլորը բյուրեղացնում է երգով: Իհարկէ, այստեղ կարևորը խոսքերը չեն: Կարևորը հենց երգն է, նրա երգի, նոտաների մէջ հենց այդ հողը, ջուրը զգում ես: Ա՛յ օրինակ, այս երգը՝ «Գարունը»…

Եվ վերջում տեղին է հիշել Գուրգեն Մահարու խոսքերը, ով ասում էր, որ «Աստված կարծես Հայաստանն ստեղծել է Սարյանի էսքիզներով»:

Եզրակացություն

Այսպիսով, Մարտիրոս Սարյանը ստեղծել է ոչ միայն դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ, պաննոներ, գծանկարներ, այլ նաև ձևավորել է մեծ թվով գրքեր, կատարել բեմանկարչական և դեկորների ձևավորումներ. և յուրաքանչյուր գործ, ստեղծագործություն կատարել է բարձր ճաշակով և որակով, քանի որ, ինչպես նշեցինք, նրա համար չեն եղել կարևոր ու երկրորդական աշխատանքներ: Գեղարվեստական որակը պահելը նկարչի համար եղել է գլխավորը:

Սարյանի արվեստը գնահատվել է նրա կենդանության օրոք՝ արժանանալով պետական բարձր պարգևների, կոչումների ու մրցանակների ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:Նրա ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսների թիվն անցում է հարյուրից, աշխատանքները գտնվում են աշխարհի հեղինակավոր թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում:

Ու թեպետ նա երբեք չի երազել հանրահայտ լինելու մասին, նա մինչև օրս էլ մնում է այն հազվագյուտ նկարիչներից մեկը, ով աշխարհին ներկայացրել է իր Հայաստանի ողջ գեղեցկությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սարգսյան Մ., Մարտիրոս Սարյան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ., Ե., 1955, 77 էջ, https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/1951-1980/m_saryan_1955.pdf

2. Сарян Мартирос, Живопись акварели, рисунки иллюстрации театрально-декорационное искусство, издательцтво <<Аврора>>, Лениград, 1987, 339 с..

3. Մարտիրոս Սարյան. Գիրք և արվեստ, https://www.cultural.am/hy/norutyunner/lurer/4047-martiros-saryan-girq-ev-arvest-cucahandesi-katalogy-bacahaytum-e-ancanot-saryanin

4. Մարտիրոս Սարյան, գիրք և արվեստ, https://hy.armradio.am/2022/10/31/%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D6%80%D5%B8%D5%BD-%D5%BD%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%AB%D6%80%D6%84-%D6%87-%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF /

5.https://angelikamanukyan.wordpress.com/2017/03/04/%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D6%80%D5%B8%D5%BD-%D5%BD%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/

6.https://syuniacyerkir.am/arants-hayreniqi-mardy-chi-karokh-gtnel-iren-ir-hogin-martiros-saryan

7.https://kentron.am/am/news/253376

8.https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D6%80%D5%B8%D5%BD_%D5%8D%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6

9.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D6%80%D6%84%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF

Հավելված

Նկար 1

Ծաղիկներ հայրենական պատերազմում զոհված մարտիկներին

Նկար 2



Վահան Տերյան. ժողովածուի շապիկը

Նկար 3

Հովհաննես Թումանյանի դիմանկարը

Նկար 4

Ավետիք Իսահակյանի դիմանկարը

Նկար 5

Եղիշե Չարենցի դիմանկարը

Նկար 6

Գուրգեն Մահարու դիմանկարը

Նկար 7

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ
ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏՀՐԱՏ 1930 ԵՐԵՎԱՆ

Նկար 8


ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԽԵՔԻՄԲՆԵՐ
ՊԵՏՀՐԱՏ 1930 ԵՐԵՎԱՆ

Նկար 9

ԱՎ. Ի. ԱԱՀԱՐՈՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նկար 10

Եգիպտական դիմանկար

Նկար 11

Լուսիկ Սարյանի դիմանկարը

Նկար 12

Երեք հասակ: Ինքնադիմանկար

Նկար 13

Ջոն Սթեյնբեք

Նկար 14

Իմ Հայրենիքը

Նկար 15

Կոմիտասի դիմանկարը